

ՔԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Յ

(ՆԱԽԵՐԳԱՆՔ)

Պատերազմ էր Հաւասփի եւ Հայրենեաց վրկութեան...
Կ'իջնէր վերջին իրիկունն, ու արիւնները վաղուան
Հորիզոնին վրայ կարծես էին կանխաւ ցոլացած
Փայլասակող, եռացող, բարձրացող առ Աստուած...:

Դաւօր ամբողջ կը դողար՝ իր խոր անունն՝ Աւարա՛յր
Արձագանգուած լրսելով ժամանակին մէջ անծայր...
Դեօր Տրդմուս կը հոսէր՝ պղտոր անունը իրեն
Աղամանդի պէս բարձած, պսպրդալէն, քրքրալէն...:

Հոն գազաթին Մասիսի, հին աստուածները Հայոց
Կը հսկէին համախումբ՝ արձակելով ծուխ ու բոց
Նոր աստուծոյն դէմ ֆէնոս, բայց արեւանդ, անհամբեր...:

Եւ դիմացէն, փաղրանիս Արագածին ի վերեւ,
Քրիստոս իջած, պահուրսած ներմակ ամպի մը ետեւ,
Ինչպէս գիշերն իր վերջին՝ բազկասարած կ'աղօթէր...:

1928

Վ.Ա.ՀԱՆ ԹԷՔԷԷԱՆ

Ծանօթ. — Վերջերս հրատարակուած իր անթիպ մէկ գործէն:

